

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Զեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Զեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճևաբուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո շմոռանար պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճևաբուղում: Պատասխանների ճևաբուղի ճիշտ լրացումից է կախված Զեր քննական միավորը:

Մարդում ենք հաջողություն:

**1 Ինչո՞վ են սնկերը նման բույսերին.**

- 1) կուտակում են զլիկոգեն
- 2) արտազատում են միզանյոթ
- 3) ունեն լավ արտահայտված բջջապատճեն
- 4) զուրկ են քլորոֆիլից

**2 Ի՞նչ առանձնահատկություններ են քնորոշ երկաքիլավոր բույսերի դասի ներկայացուցիչների մեջ մասին.**

- 1) առանցքային արմատային համակարգ
- 2) փնջաձև արմատային համակարգ
- 3) տերևների աղեղնաջիղ ջղավորություն
- 4) տերևների զուգահեռաջիղ ջղավորություն

**3 Ինչո՞վ (ինչպե՞ս) է շնչում հիդրան.**

- 1) տրախինեաներով
- 2) պարկանման թոքերով
- 3) մարմնի ամբողջ մակերեսով
- 4) բույլ զարգացած խոիկներով

**4 Թվարկված կենդանիներից ո՞րը չի պատկանում ժապավենաձև որդերի դասին.**

- 1) էլսինոկովը
- 2) սրատուտը
- 3) խոզի երիզորդը
- 4) եղան երիզորդը

**5 Ո՞ր միջատներն են զարգանում թերի կերպարանափոխությամբ.**

- 1) մեղուները
- 2) մորեխները
- 3) մոծակները
- 4) մրջյունները

**6 Ո՞ր ուկորն է բացակայում գորտի կմախրում.**

- 1) պարանոցային ողը
- 2) բազուկոսկրը
- 3) կոնքոսկրը
- 4) կողոսկրը

7

**Ի՞նչը բնորոշ չէ քոչունների արյունատար համակարգին.**

- 1) ձախ փորոքից սկիզբ է առնում արյան շրջանառության մեծ շրջանը
- 2) ձախ նախասրտում ավարտվում է արյան շրջանառության մեծ շրջանը
- 3) առրտայի աջակողմյան աղեղի առկայությունը
- 4) աջ փորոքից սկիզբ է առնում արյան շրջանառության փոքր շրջանը

8

**Մարդու օրգանիզմում որտե՞ղ են գտնվում պայմանական ռեֆլեքսների կենտրոնները.**

- 1) վեգետատիվ նյարդային համակարգի հաճգույցներում
- 2) ողնուղեղի զորչ նյութի հետևի եղջյուրներում
- 3) գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևում
- 4) ողնուղեղային հանգույցներում

9

**Մարդու օրգանիզմում ո՞ր գործառույթներն (գործառույթներն) են դեկավարում կամքում գտնվող կենտրոնները.**

- 1) օրգանիզմի ներքին միջավայրի հաստատունության պահպանում
- 2) ակնազմների և դիմախսաղի մկանների շարժումներ
- 3) ջերմակարգավորում
- 4) կլում

10

**Մարդու զգայարանների ո՞ր կառույցներում չկան ընկալիչներ.**

- 1) քրի և բերանի խոռոչների պատերին
- 2) խխունջում և կիսաբոլոր խողովակներում
- 3) ձվածն (օվալածն) և կլոր պատուհաններում
- 4) կլոր և ձվածն պարկիկներում

11

**Ի՞նչ նյութեր է պարունակում առողջ մարդու առաջնային մեզը.**

- 1) գլյուկոզ, միզանյութ, միզաքթու, այլ օրգանական նյութեր և հանքային աղեր
- 2) պլազմայի բոլոր բաղադրիչներն առանց բացառության
- 3) պլազմայի որոշ բաղադրիչներ՝ միզագոյացումը կարգավորող հորմոններ, հակամարմիններ, միզանյութ
- 4) միայն պլազմայի անօրգանական բաղադրիչներ

12

Ո՞ր պնդումն է սխալ մարդու լեյկոցիտների վերաբերյալ.

- 1) քանակը կարող է ավելանալ սնունդ ընդունելիս
- 2) չափսերով ավելի փոքր են, քան էրիթրոցիտները
- 3) մեծ քանակությամբ կան թարախում
- 4) ունեն կորիզ, առաջանում են կարմիր ոսկրածուծում

13

Մարդու ո՞ր անորթներում է երակային արյունը վերածվում զարկերակայինի.

- 1) օրգանիզմի բոլոր մազանորթներում և զարկերակներում
- 2) բոքային զարկերակներում և արյան շրջանառության մեծ շրջանի մազանորթներում
- 3) արյան շրջանառության մեծ շրջանի մազանորթներում
- 4) արյան շրջանառության փոքր շրջանի մազանորթներում

14

Ո՞ր պնդումն է ճիշտ վիտամին B<sub>12</sub>-ի վերաբերյալ.

- 1) թերվիտամինոզի կամ ավիտամինոզի դեպքում զարգանում է թերի-թերի հիվանդությունը, ջրալույծ է
- 2) թերվիտամինոզի կամ ավիտամինոզի դեպքում զարգանում են մաշկի և լորձաթաղանթների խոցեր, ճարպալույծ է
- 3) ջրալույծ է, ավիտամինոզի դեպքում զարգանում է չարորակ սակավարյունություն
- 4) հանդիսանում է էներգիայի աղբյուր, թերվիտամինոզի դեպքում խթանվում է ոռղոպսինի սինթեզը

15

Ո՞ր օրգանին է հարում մարդու ենթաստամոքսային գեղձի պոչային հատվածը.

- 1) տասներկումատնյա աղուն
- 2) ստամոքսին
- 3) փայծաղին
- 4) լյարդին

16

Ի՞նչ դեր է կատարում լեղին մարդու օրգանիզմում.

- 1) բուլացնում է աղիների շարժողական ակտիվությունը
- 2) խթանում է նեխսման գործընթացները
- 3) արգելակում է մարտղական ֆերմենտների արտադրությունը
- 4) նպաստում է ճարպերի էմուլսացմանը և ներծծմանը

17

**Ի՞նչ է տեղի ունենում մարդու օրգանիզմում միջավայրում ջերմաստիճանի անկման դեպքում.**

- 1) մաշկի արյան անոթները լայնանում են, արյան հոսքը արագանում է, մարմնի ջերմատվությունը մեծանում է
- 2) նեղանում են մաշկի մազանոթների լուսածերպերը, նվազում է մարմնի ջերմատվությունը
- 3) աճում է արյան հոսքը դեպքի մաշկ, իսկ մարմնի ջերմատվությունը նվազում է
- 4) լայնանում են մաշկի արյան անոթները և մեծանում է այնտեղ մղվող արյան քանակը

18

**Ո՞ր ածխաջուրն է պատկանում մոնոսախարիդներին.**

- 1) օսլան
- 2) գալակտոռը
- 3) գլիկոգենը
- 4) ցելյուլոզը

19

**Ո՞ր սպիտակուցն է մտնում միկրոխողովակների կազմության մեջ.**

- 1) միոգինը
- 2) ֆիբրինը
- 3) կոլագենը
- 4) սուրուլինը

20

**Ո՞ր հիվանդության հարուցիչը չի պատկանում պրոկարիոտներին.**

- 1) որովայնային տիֆի
- 2) պոլիոմիելիտի
- 3) անգինայի
- 4) խոլերայի

21

**Բջջի օրգանիդներից քաղանթային կառուցվածքը չունեն.**

- 1) վակուուները և լիզոսոմները
- 2) ռիբոսոմները և Գոլցիի ապարատը
- 3) բջջային կենտրոնը և լիզոսոմները
- 4) ռիբոսոմները և բջջային կենտրոնը

22

Ի՞նչ է զարգանում սերմնասկզբնակից ծաղկավոր բույսերի կրկնակի բեղմնավորումից հետո.

- 1) սերմը
- 2) սերմնամաշկը
- 3) պտուղը
- 4) պտղապատը

23

Ինչո՞ւ է գենետիկական կոդը համարվում միանշանակ և ունիվերսալ քանի որ՝

- 1) բույր օրգանիզմներում նույն եռյակները պայմանավորում են նույն ամինաթրուն
- 2) յուրաքանչյուր նուկլեոտիդ կարող է լինել միայն մեկ որոշակի եռյակի կազմում
- 3) գեների միջն կան «ընդհատումներ»
- 4) միևնույն ամինաթրուն կարող է գաղտնազրվել մեկից ավելի եռյակներով

24

Ի՞նչ գործընթաց կարող է տեղի ունենալ նիտրիֆիկացման ընթացքում.

- 1) ամոնիակի օքսիդացում մինչև ազոտային թրու
- 2) ազոտական թրվի վերականգնում մինչև ամոնիակ
- 3) սպիտակուցի քայլայում՝ ամոնիակի առաջացումով
- 4) ազոտական թրվից ազոտային թրվի առաջացում

25

Ի՞նչ առանձնահատկություն ունեն գորտի բլաստուի բջիջները ութքջային փուլում.

- 1) տարբերակված են
- 2) տարբերվում են չափսերով
- 3) նման են դեղնուցի քանակով, բայց չունեն ԴՆԹ և ՌՆԹ-
- 4) տարբեր են կառուցվածքով, բայց նման են դեղնուցի քանակով

26

Ո՞ր գեներն են կոչվում շղթայակցված.

- 1) մեկ քրոմոսոմում գտնվող գեները
- 2) առոտոսմների տարբեր զույգերում գտնվող գեները
- 3) սեռական քրոմոսոմների նույն լոկուսներում գտնվող գեները
- 4) հոմոլոգ քրոմոսոմների տարբեր զույգերում գտնվող գեները

27

Ո՞ր կենդանիների սեռական տարրերակումն է կախված արտաքին միջավայրի ջերմաստիճանից.

- 1) մեղուների
- 2) մրջյունների
- 3) մողեսների
- 4) կոկորդիլոսների

28

Ի՞նչ է ստացվում երկինտերոգիզոտ առանձնյակի և հոմոզիգոտ դոմինանտ առանձնյակի խաչասերման արդյունքում՝ երկու ալելներից մեկի ոչ լրիվ դոմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում.

- 1) 4 ֆենոտիպային և 4 գենոտիպային ձևեր
- 2) 2 ֆենոտիպային և 4 գենոտիպային ձևեր
- 3) 1 ֆենոտիպային և 4 գենոտիպային ձևեր
- 4) 2 ֆենոտիպային և 2 գենոտիպային ձևեր

29

Մարդու ո՞ր հիվանդության պատճառն է առոտոսմներում գտնվող մուտանտ դրմինանտ գենը.

- 1) ալբինիզմի
- 2) Մարֆանի սինդրոմի
- 3) ֆենիլկետոնուրիայի
- 4) Քլայնֆելտերի սինդրոմի

30

Ի՞նչ տիպի գամետներ կառաջացնի մուգ մարմին և սաղմնային թևեր ունեցող դրոզոֆիլ պտղածաննը.

- 1) ab
- 2) AB
- 3) AB, aB
- 4) Ab, aB

31

Ի՞նչ է ալեյոտրոպիան.

- 1) էպիստազ
- 2) գերդոմինանտություն
- 3) միջանկյալ ժառանգման երևույթ
- 4) գեների բազմակի ազդեցություն

32

Ինչի՞ արդյունքում կարող է տեղի ունենալ նոր տեսակների առաջացում նախկին արեալի ներսում նույն տեսակի պոպուլյացիաներից.

- 1) մոդիֆիկացիոն փոփոխականության
- 2) էկոլոգիական մեկուսացման
- 3) կոնվերգենցիայի
- 4) աշխարհագրական մեկուսացման

33

Ի՞նչն է ընկած տեսակի ձևաբանական չափանիշի հիմքում.

- 1) առանձնյակների ներքին և արտաքին կառուցվածքի նմանությունները
- 2) տեսակի գրադեցրած արեալը
- 3) սպիտակուցների և նուկլեինաթթուների կառուցվածքն ու կազմը
- 4) քրոմոսոմների թիվը

34

Կենդանի նյութի ո՞ր փունկցիայի հետ է կապված ծծմքի և երկարի հանքերի առաջացումը.

- 1) միջավայրագոյացնող
- 2) էներգիական
- 3) դեստրուկտիվ
- 4) կուտակող

35

Ինչպես է կոչվում փոխհարաբերությունների այն ձևը, որի դեպքում տեսակներից միայն մեկն է օգուտ ստանում՝ առանց վճասելու մյուս տեսակին.

- 1) ամենաալիզմ
- 2) կոռպերացիա
- 3) կոմենսալիզմ
- 4) մուտուալիզմ

36

Ո՞ր պնդումն է ճիշտ գիշատչության վերաբերյալ.

- 1) գիշատիչ սնկերը չեն կարող ազդել հողում իրենց զոհերի՝ նեմատոդների թվաքանակի վրա
- 2) գիշատիչ բույսերը կարող են կարգավորել միջատների թվաքանակը
- 3) բույսերի գիշատչությունը զարգացել է որպես ազոտի և այլ կարևոր տարրերի մշտական անբավարարության փոխհատուցման ձև
- 4) գիշատիչները չեն կարող լինել երկրորդ կարգի կոնսումենտներ

(37-38) Ծնողներն ունեն արյան II և III խմբեր: Նրանց առաջին երեխան ուներ արյան I խումբ: Այդ ընտանիքում ծնվեցին երկագույն երեխաներ:

37

Ինչպիսի՞ հավանականությամբ երկվորյակները կունենան արյան I խումբ.

- 1) 1\2
- 2) 1\4
- 3) 1\8
- 4) 1\16

38

Ինչպիսի՞ հնարավոր գենոտիպ ունի արյան II խումբ ունեցող ծնողը.

- 1)  $I^A I^A$
- 2)  $I^A I^0$
- 3)  $I^A I^B$
- 4)  $I^0 I^0$

(39-40) Սրտի բոլորաշրջանը տևում է 0,8 վրկ: Առողջ մարդու հարաբերական հանգստի վիճակում նախասրտերի քուլացման տևողությունը կազմել է 14 րոպե:

39

Քանի՞ րոպե է կազմում նախասրտերի կծկման տևողությունը այդ ընթացքում.

- 1) 1,4
- 2) 2
- 3) 16
- 4) 14

40

Այդ ընթացքում քանի՞ լիտր արյուն է մղվել մեծ շրջանառություն, եթե մեկ փորոքի կողմից շրջանառություն մղված արյան ծավալը 70 մլ է.

- 1) 42
- 2) 70
- 3) 84
- 4) 168

41

Ո՞ր բնութագիրը (նշված է ձախ սյունակում) օրգանիզմների բազմացման ո՞ր ձևին է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Բնութագիր

Բազմացման ձև

- A. կրկնակի բեղմնավորում
- B. զուսպորների առաջացում
- C. սերմերի առաջացում
- D. գամետների առաջացում
- E. կուսածնություն
- F. կտրոններով բազմացում
- G. ինֆուզորիայի կոնյուգացիա

- 1. սեռական բազմացում
- 2. անսեռ բազմացում

42

Ո՞ր հատկանիշը (նշված է ձախ սյունակում) գեների միջև փոխներգործության ո՞ր բնույթին է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Հատկանիշ

Գեների փոխներգործության բնույթ

- A. մարդու արյան խումբը
- B. բրախիդակտիլիան
- C. ոլորի սերմերի գույնը
- D. լոլիկի որոշ սորտերի բարձր բերքատվությունը հետերոզիգոտ վիճակում
- E. ոլորի սերմերի ձևը
- F. զիշերային գեղեցկուիդ ծաղկի գույնը

- 1. կոդոմինանտություն
- 2. գերդոմինանտություն
- 3. ոչ լրիվ դոմինանտություն
- 4. լրիվ դոմինանտություն

43

Գլխուղեղի կեղևի ո՞ր գոտին (նշված է ձախ սյունակում) կեղևի ո՞ր մասին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Կեղևի գոտի

- A. շարժողական
- B. խոսքի
- C. տեսողական
- D. մաշկամկանային զգայության
- E. լսողական
- F. հոտառական

Կեղևի մաս

- 1. գագաթային բիլթ
- 2. ճակատային բիլթ
- 3. ծոծրակային բիլթ
- 4. քունքային բիլթ
- 5. քունքային բլթի ներքին մաս

44

Բաժանման ո՞ր պրոցեսը (նշված է ձախ սյունակում) քջի բաժանման ո՞ր ձևին և փուլին (նշված են աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Բաժանման պրոցես

- A. ցենտրիուլները տարամիտվում են դեպի տարբեր թերուներ, սկսում է ձևավորվել բաժանման իլիկը, հոմոլոգ քրոմոսոմներն առանձին-առանձին են
- B. հապլոիդ թվով երկրրոմատիդային քրոմոսոմներն ապապարուրվում են
- C. հոմոլոգ քրոմոսոմները դասավորվում են մեկ հարթության վրա՝ կողք կողքի
- D. տեղի է ունենում ցիտոպլազմայի բաժանում, ձևավորվում են դիպլոիդ քջիցներ
- E. հոմոլոգ քրոմոսոմները դասավորվում են իլիկի հասարակածային գոտում՝ դեմ դիմաց
- F. սկսում է ձևավորվել բաժանման իլիկը, տեղի է ունենում հոմոլոգ քրոմոսոմների կոնյուգացիա և տրամախաչում

Քջի բաժանման ձև և փուլ

- 1. մեյոզի առաջին բաժանման թելոֆազ
- 2. մեյոզի առաջին բաժանման պրոֆազ
- 3. միտոզի մետաֆազ
- 4. միտոզի պրոֆազ
- 5. մեյոզի առաջին բաժանման մետաֆազ
- 6. միտոզի թելոֆազ

45

Ինչպիսի՞ համապատասխանություն գոյություն ունի մարդու օրգանիզմի կառուցվածքի առանձնահատկության (նշված է ձախ սյունակում) և էվոլյուցիայի ապացույցների (նշված է աջ սյունակում) միջև։ Նշել համապատասխանություններն ըստ հերթականության։

Կառուցվածքի առանձնահատկություն

Ապացույց

- |                                |              |
|--------------------------------|--------------|
| A. պոչի առկայություն           | 1. ատավիզմ   |
| B. կույր աղիքի որդաննան ելուստ | 2. ռուղիմենտ |
| C. պոչուկ                      |              |
| D. դեմքի խիտ մազածածկույթ      |              |
| E. լրացուցիչ պտուկներ          |              |
| F. երրորդ կոպի մնացորդ         |              |
| G. մաշկային մկաններ            |              |

46

Ինչպիսի՞ն է արյան հաջորդական ուղին ձկների արյունատար համակարգում՝ սկսած սիրտ մտնելու պահից։ Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. փորային առտա
2. դեպի սիրտ տանող երակներ
3. մեջքային առտա
4. նախասիրտ
5. խոիկային թերթիկների մազանոքներ
6. մերքին օրգանների մազանոքներ
7. փորոք

47

Ի՞նչ հաջորդականությամբ է ազդակն անցնում ռեֆլեքսային աղեղով մարդու օրգանիզմում։ Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. շարժողական նեյրոնի աքսոն
2. ներդիր նեյրոն
3. զգայական նեյրոնի դենդրիտ
4. գործառող օրգան
5. զգայական նեյրոնի աքսոն
6. ընկալիչ
7. ողնուղեղային հանգույց
8. ողնուղեղի առջևի եղջյուր

48

Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում արյան մակարդման գործընթացները մարդու օրգանիզմում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ֆիբրինոգենի բնափոխում
2. թրոմբոցիտների քայլայում
3. ֆիբրինի առաջացում
4. թրոմբոցիտների հպում արյունատար անոթի անհարթ մակերևույթին
5. արյան պլազմայի մեջ թրոմբինի արտազատում
6. թրոմբի առաջացում
7. արյունատար անոթի պատի վնասում

49

Ինչպիսի՞ն է արյունատար համակարգի անոթների ճյուղավորման հաջորդականությունը մարդու արտազատության համակարգում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. արտատար զարկերակի ճյուղավորում մազանոթների
2. մանր զարկերակների առաջացում
3. երիկամային զարկերակի ճյուղավորում
4. երիկամային երակի առաջացում
5. առբերող զարկերակի ճյուղավորում մազանոթների
6. փոքր լուսանցքով երակի առաջացում
7. մազանոթների միացում

50

Ի՞նչ հաջորդականությամբ է մքնողրտային թթվածինն անցնում մարդու բջիջներ՝ սկսած ներշնչման պահից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. օքսիհեմոգլոբինի փոխադրում արյան կազմում մեծ շրջանի անոթներով
2. օքսիհեմոգլոբինի առաջացում
3. օղի թափանցում թոքարշտեր
4. թթվածնի դիֆուզում մազանոթների պատով
5. թթվածնի դիֆուզում թոքարշտերի պատով
6. թթվածնի անջատում հեմոգլոբինից
7. թթվածնի դիֆուզում ներքին օրգանի բջջի բջջաթաղանթով

51

Ինչպիսի՞ն է ֆոտոսինթեզի նշված գործընթացների հաջորդականությունը.

1. գրգռված էլեկտրոնի անցում փոխադրիչ մոլեկուլի վրա
2. քլորոֆիլի մոլեկուլի վերականգնում
3. ատոմային ջրածնի առաջացում
4. քլորոֆիլի մոլեկուլից էլեկտրոնի անջատում
5. քլորոֆիլի մոլեկուլի գրգռում
6. գլյուկոզի առաջացում
7. ջրի ֆոտոլիզ (քայլայում)

52

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. կարնասուների մազերը, սողունների թեփուկները, թռչունների փետուրները կազմված են եղջերային նյութից
2. ձկների ողնաշարում տարրերում են երեք բաժիններ՝ պարանոցի, իրանի, պոչի
3. կարնասունների ձվաբջիջի բեղմնավորումը տեղի է ունենում արգանդում
4. թռչունների կտցուկրերը ազատություն են տալիս թևերի շարժմանը
5. անձրևորդի կերակրափողի մեջ բացվում են կրային գեղձերի ծորանները
6. սողունների հաստ աղին վերջանում է կտնաօքով, որտեղ բացվում են արտազատական և սեռական օրգանների ծորանները
7. հոդվածոտանինների խիտինային ծածկույթին առանձին խրձերի ձևով ամրանում են միջաձիգ-զոլավոր մկանները

53

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր ճիշտ պնդումները.

1. ըմպանը մկանային օրգան է, որի պատերին գտնվում են լսողական փողերի անցքերը, որոնք կապում են ըմպանը ներքին ականջի խոռոչի հետ
2. կերակրափողը եռաշերտ պատերով սնամեջ խողովակ է
3. կլման ընթացքում մարսողական ուղու մուտքը փակվում է մակլուկորդով
4. պէպսինը և տրիպսինը գործում են թթվային միջավայրում, իսկ ամիլազը՝ հիմնային
5. բուրն անգույն, թույլ թթվային ռեակցիա ունեցող հեղուկ է, որը մասնակցում է սպիտակուցների ճեղքմանը
6. ողնուղեղի կրծքային հատվածներից ուղարկվող նյարդային ազդակները հանգեցնում են մարսողական գեղձերի ծորանների նեղացմանը, մարսողական ուղու մկանունքի կծկումների բուլացմանը

## Նշել բոլոր ճիշտ պնդումները.

- Գոլջիի ապարատը բնորոշ է բոլոր կորիզավոր թշիճներին և ունի ցանցանման կառուցվածք
- Ծխախոտի խճանկարային հիվանդություն հարուցող վիրուսի մասմիկը ձողածն է, իսկ ծխախոտի նեկրոզի վիրուսը գնդիկային տեսքով կառույց է
- Քլորոֆիլը քիմիական կառուցվածքով պորֆիրին է, որի բաղադրության մեջ մտնում է երկարը
- Այն երեսույթը, երբ բջջում մեկ վիրուսի առկայությունը հաճախ պաշտպանում է թշիջը այլ վիրուսի ներքափանցումից, կոչվում է ինտերֆերենցիա
- Կորիզահյութը իր քիմիական կազմով չի տարբերվում ցիտոպլազմայի բաղադրությունից
- Քրոմատինի հիստոնային սպիտակուցները հարուստ են արգինին և լիզին ամինաթթուների մնացորդներով, ինչը այդ սպիտակուցներին տալիս է թթվային հատկություններ

## Նշել բոլոր ճիշտ պնդումները.

- Պրոզոֆիլ պտղաճանճի աչքի գույնը սեռի հետ շղթայակցված հատկանիշ է, որը պայմանավորող գենը տեղակայված է Y քրոմոսոմում
- Սորգանի օրենքը վերաբերում է գեների շղթայակցմանը
- Առաջին սերնդում 1:1 հարաբերությունն ըստ ֆենոտիպի ստացվում է այն դեպքում, եթե ծնողական առանձնյակներից մեկը հոմոզիգոտ է՝ ըստ ռեցեսիվ ալելի, մյուսը՝ հետերոզիգոտ
- Սենդելի անկախ բաշխման օրենքը վերաբերում է միայն այն հատկանիշների ժառանգմանը, որոնց պայմանավորող գույզ ալելային գեները գտնվում են տարբեր գույզ հոմոլոզ քրոմոսոմներում
- Երկինական առանձնյակների խաչասերման արդյունքում, գույզ ալելների լրիվ դոմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում սերնդում դիտվում է 9:3:3:1 ճեղքավորում՝ և՛ ըստ գենոտիպի, և՛ ըստ ֆենոտիպի
- Վերլուծող խաչասերման ժամանակ անհայտ գենոտիպ ունեցող առանձնյակը խաչասերում են դոմինանտ գենով առանձնյակի հետ

56

**Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր սխալ պնդումները.**

1. վահանաձև գեղձի հորմոնի անրավարարությունը մանկական հասակում առաջ է բերում զաճաճություն հիվանդությունը
2. ենթաստամքսային գեղձի գյուկագոն հորմոնն արյան մեջ գյուկոզի հավելյալ քանակը դարձնում է գլիկոզեն
3. ոչ պայմանական ռեֆլեքսների իրականացման համար պարտադիր է գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևի մասնակցությունը
4. բռքերը մկանային օրգաններ են, որոնք պասիվ կերպով հետևում են լայնացող կրծքավանդակի պատերին
5. կոկորդի ներքին պատը պատված է թարթիչավոր ծածկութային հյուսվածքով
6. թարթիչավոր մարմնի մկանները փոխում են ակնաբյուրեղի կորությունը
7. արյան ամենափոքր ճնշումը դիտվում է մազանոթներում

57

**Նշել բոլոր սխալ պնդումները.**

1. բնական ընտրությունն ունի ուղղողությած բնույթ
2. կայունացնող ընտրությունը հանգեցնում է ռեակցիայի նորմայի փոփոխմանը մեկ որոշակի ուղղությամբ
3. մակրոէվոլյուցիայի հիմքում ընկած են ժառանգական փոփոխականությունը, գոյության կոհիվը և բնական ընտրությունը
4. դիվերգենցիան նոր տեսակների և դրանց հետավոր նախնիների միջև սկզբուն հազիվ նկատելի տարրերությունների անընդհատ մեծացող և խորացող գործընթաց է
5. արտաքինից միանման և միևնույն ֆունկցիա կատարող, բայց տարրեր ծագում ունեցող օրգանները կոչվում են հոմոլոգ օրգաններ
6. բնական էկոհամակարգերի կայունության հիմնական պատճառն էներգիայի հնաքի և նյութերի շրջապտույտի հավասարակշռվածությունն է

58

## Նշել բոլոր սխալ պնդումները.

- բջջում ջուրը թթվածնի և ջրածնի աղբյուր է
- գյուկոզի՝ մինչև պիրոխաղողաթթվի ճեղքման արդյունքում անջատվում է 150 կՎ/նոլ էներգիա, որի մեծ մասը (60 %) վերածվում է ԱԵՖ-ի մակրոէրգիկ կապի էներգիայի, իսկ մյուս մասը (40 %) ցրվում է որպես ջերմային էներգիա
- քլորոֆիլը հիմնականում կլանում է կարմիր և կապտամանուշակագույն լույսը, իսկ կանաչն անդրադարձնում է, որի պատճառով բույսերը հիմնականում կանաչ գույն ունեն
- մկանային բջիջների ցիտոպլազմայում պահպանվում է կալցիումի իոնների շատ բարձր խտություն՝ հատիկավոր էնդոպլազմային ցանցի կազմավորած սարկոպլազմային ցանցի շնորհիվ
- էներգիական փոխանակության թթվածնային փուլում, երբ պրոտոնային պոտենցիալը միտոքոնորիումների թաղանթի երկու կողմերում հասնում է որոշակի սահմանային մեծության, ջրածնի պրոտոններն էլեկտրական դաշտի ազդեցության տակ մղվում են ԱԵՖ-սինթազի անցուղու միջով՝ ներքին մակերևույթից դեպի թաղանթի արտաքին կողմը
- ԴՆԹ-ի մեկ շղթայում նուկլեոտիդները միմյանց են միանում մեկ նուկլեոտիդի ֆուֆորական թթվի և մյուսի ածխաջրային մնացորդի միջև առաջացող կռվալենտ կապով

(59-60) 200 օրվա ընթացքում (միջինը 15-ժամյա լուսային օր) ֆոտոսինթեզի պրոցեսում արտադրվել է 64 կգ Օ<sub>2</sub>:

59

Գտնել ծառի տերևային մակերևույթի մակերեսը ( $\text{m}^2$ ):

60

Որքա՞ն օրգանական նյութ (գլյուկոզ) է սինթեզվել այդ ընթացքում (կգ):

(61-63) Սպիտակուցի զանգվածը 74750 գ.ա.մ. է:

61

Քանի՞ անգամ է այդ սպիտակուցի սինթեզը կողավորող գենի զանգվածը գերազանցում սպիտակուցի զանգվածը, եթե մեկ ամինաքայլին մնացորդի միջին մոլեկուլային զանգվածը 115 գ.ա.մ. է, մեկ նուկլեոտիդինը՝ 310 գ.ա.մ.։  
Պատասխանում պահպանել միայն ամբողջ թիվը:

62

Քանի՞ նմ է տվյալ գենի երկարությունը, եթե մեկ նուկլեոտիդի երկարությունը ԴՆԹ-ի շղթայում 0,34 նանոմետր է:

63

Քանի՞ աղենինային նուկլեոտիդ կա տվյալ գենում, եթե հայտնի է, որ գուանինային նուկլեոտիդների թիվը 2,9 անգամ մեծ է աղենինային նուկլեոտիդների թվից:

(64-65) Մարդը 48,816 մ<sup>3</sup> ծավալով աշխատասենյակում գտնվել է 10 ժամ: Այդ ընթացքում կատարել է ֆիզիկական աշխատանք 9 ժամ: Աշխատանքի ժամանակ շնչառական շարժումների հաճախականությունն աճել է 1,6 անգամ, շնչառական ծավալը՝ 1,5 անգամ, իսկ օրգանիզմում յուրացվող քրվածնի ծավալը աճել է 25%-ով: Ընդունել, որ սենյակը մեկուսացված է, հարաբերական հաճախտի վիճակում մարդը 1 րոպեում արքուն ժամանակ կատարում է 18 շնչառական շարժում:

64

Սենյակի օղի քանի՞ սոոկոսն է ներշնչել մարդը այդ 10 ժամվա ընթացքում:

65

Քանի՞ լիտր քրվածին է յուրացվել մարդու օրգանիզմում այդ 10 ժամվա ընթացքում:

(66-67) Օրգանիզմում գլիկոլիզի ընթացքում անջատված ջերմային էներգիայի 21%-ը ծախսվել է 0,3 կգ քրտինք գոլորշիացնելու համար: Օրգանիզմում կուտակվել է 28 մոլ կաթնաբբու: Ընդունել, որ 1 մոլ գլյուկոզից մինչև կաթնաբբու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կՋ և ԱԵՖ-ի մինչև ԱԿՖ ճեղքման արդյունքում անջատվում է 30 կՋ/մոլ էներգիա և 1 գ քրտինքի գոլորշիացման համար օրգանիզմը ծախսում է 2,45 կՋ էներգիա:

66

Քանի՞ մոլ CO<sub>2</sub> է առաջացել այդ պրոցեսի արդյունքում:

67

Որքա՞ն օգտակար էներգիա է կուտակվել (կՋ-ով) այդ պրոցեսի արդյունքում:

68

Փոքր լճակում ձկների քանակը որոշելու համար որսացել են 750 ձուկ, նշան արել և նորից բաց թողել լիճ: Որոշ ժամանակ անց որսացել են 2700 ձուկ, որից 54-ը նշված էին: Գտնել պոպուլյացիայի նոտավոր թվաքանակը:

69

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից մեկը.

1. մարդու լրացուցիչ կնախքը կազմված է վերջույթների գոտիներից և ազատ վերջույթների կմախքից
2. միջաձիգ-զոլավոր մկանային հյուսվածքը կազմված է մանր, իլիկաձև, միակորիգ բջիջներից
3. ողնաշարի պարանոցային և սրբանային կորություններն ուղղված են դեպի առաջ
4. շարժման ընթացքում ավելի սակավաշարժ ուկրերին միացող ջիլն անվանում են մկանի պոչ, իսկ շարժուն ուկրերին միացողը՝ մկանի գլխիկ
5. մարդու կրծքավանդակում կողոսկրերը շարժուն միացած են կրծոսկրին
6. միջկողային և ստոծանու մկանների թուլացման ժամանակ կողոսկրերն ու ստոծանին իջնում են և տեղի է ունենում արտաշնչում

70

Օվոգենեզի վերաբերյալ տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից մեկը.

1. Երկրորդ կարգի օվոցիտի երկրորդ բաժանումը մեյոզի ընթացքում կանգ է առնում պրոֆազում և շարունակվում է մինչև վերջ միայն ձվագատման պահին
2. առաջին կարգի օվոցիտներն ունեն քրոմոսոմների 4n4c հավաքակազմ
3. ձվարանների բազմացման գոտու 2n2c հավաքակազմով բջիջները կոչվում են օվոգրնիումներ
4. առաջին կարգի օվոցիտը միտոզով կիսվելով՝ վերածվում է երկրորդ կարգի օվոցիտի
5. մեյոզի առաջին բաժանումից առաջանում են երկու անհավասար հապլոիդ բջիջներ
6. 1n2c հավաքակազմ ունեցող խոշոր բջիջը կոչվում է երկրորդ կարգի օվոցիտ, իսկ փոքր բջիջը՝ ուղղորդող մարմին